

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2018թվականի հունվարի 26-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը <<ԳՀԱՊՁԲ-2018/1-1-ԵՊԲՀ>>

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի կարիքների համար վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԳՀԱՊՁԲ-2018/1-1-ԵՊԲՀ>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 25.01.2018թ. և 26.01.2018թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 26.01.2018թ. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1, 2, 3 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վառելիքի շուկայում գները անկայուն են, հաճախակի և աննախադեպ տատանվում են, արդյոք հնարավոր է գնային առաջարկ ներկայացնել միայն 2018 թվականի առաջին եռամսյակի համար:

Պարզաբանում N 1 Հարգելի մասնակիցներ.

Ի պատասխան Ձեր 25.01.2018թ. և 26.01.2018թ. ստացված հարցումներին՝ տեղեկացնում եմ, որ <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի կարիքների համար <<Վառելիքի>> ձեռքբերման նպատակով <<ԳՀԱՊՁԲ-2018/1-1-ԵՊԲՀ>> ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով նախատեսվում է ձեռքբերել 2018 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակներում: Գնման ընթացակարգին հայտեր չներկայացնելու դեպքում ընթացակարգը՝ գնահատող հանձնաժողովի համաօպատասխան որոշմամբ կհաղտարարվի չկայացած:

Հայտնում ենք նաև, որ հիմք ընդունելով <<ԳՀԱՊՁԲ-2018/1-1-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 9-րդ կետի 7-րդ ենթակետը՝ մինչև հրավերի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել <<ԳՀԱՊՁԲ-2018/1-1-ԵՊԲՀ>> ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Միքայել Ղարիբյանին:

Հեռախոս՝ 060 621000(249):

Էլեկտրոնային փոստ՝ marketing.ysmu8@gmail.com:

<<ԳՀԱՊՁԲ-2018/1-1-ԵՊԲՀ>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը